

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՔԻ ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ  
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (Պոլիտեխնիկ)

Գիտական ղեկավար տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր  
Լևիկ Հրանտի Աղաջանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Միքայել Սերգեյի Մելքունյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Կարեն Վլադիմիրի Տուրյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային ագրարային  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թվականի հունիսի 6-ին՝ ժամը 15<sup>30</sup> – ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ- ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:


Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 3 - ին

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար, տ.գ.դ., պրոֆեսոր



Ա.Լ. Ասլանյան

## ՄԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Չեղարկության բեմայի արդիականությունը:** Փոքր և միջին ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության կարևորագույն օղակն է, որն իր հետ կապակցում է տնտեսության բոլոր ոլորտները: Այն հնարավորություն է տալիս ստեղծել և ամրասցնել շուկայական միջավայրը, տնտեսական շրջանառության մեջ ներգրավել բնակչության ֆինանսական և նյութական ռեսուրսները, մեղմացնել հասարակության սոցիալական լարվածությունը: Շուկայական տնտեսությունում փոքր և միջին ձեռնարկատիրության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ մշտական մրցակցային միջավայր է ապահովում տնտեսության մեջ և միաժամանակ մեղմացնում է արտադրության մենաշնորհային դրսևորումները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորման համար խթան հանդիսացավ զարգացած երկրներում կապիտալի խոշորացման միտումների դանդաղումը: Դրա հիմնական պատճառը տնտեսության մեջ դեպի ծառայությունների ոլորտը կառուցվածքային տեղաշարժերն էին: Սպասարկող կազմակերպությունների համար մասշտաբից ստացվող արդյունքը մեծ չէ, և անգամ հակառակը, գործունեության փոքր ծավալը մրցակցային առավելություններ է ստեղծում շուկայական փոփոխությունների վրա՝ արձագանքման ճկունության տեսքով: Փոքր կազմակերպությունները ապահովում են սպասարկման ծառայությունների հիմնական ծավալն ամբողջ աշխարհում, ինչը վկայում է տվյալ ձևի կազմակերպությունների կարևորության մասին ծառայությունների այդ թվում և ենթագետիկայի ոլորտում:

Չայաստանում ենթաապահովման և ենթազամտակարարման կենտրոնացված համակարգի պահպանման դեպքում առավել մեծ չափով հնարավորություններ են ստեղծվում փոքր ենթագետիկայի զարգացման համար և, համապատասխանաբար, զգալիորեն կարևորվում է փոքր հզորությամբ ենթագիտ ապահովող սարքավորումների նկատմամբ պահանջարկը:

Այդ նպատակով անհրաժեշտ է օգտագործել ենթագիտի ստացման ոչ ավանդական, այլընտրանքային աղբյուրները: Չայաստանն օժտված է ոչ ավանդական եղանակով ստացվող ենթագիտի աղբյուրների զգալի ներուժով (արևային ենթագիտ, փոքր գետերի ենթագիտ, գետնետրիկ ենթագիտ, բիոզանգվածային ենթագիտ և այլն): Նման ներուժի օգտագործումը հանդիսանում է բնակչությանը, արդյունաբերական ու գյուղատնտեսական կազմակերպություններին ենթագիտյով և ջերմությամբ ապահովման կարևորագույն տարր:

Որպես տարածաշրջանի էներգետիկական շուկայի մասնակիցներից մեկը՝ Հայաստանը հոգ է տանում սեփական էներգետիկայի զարգացման հեռանկարի վերաբերյալ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը այդ համատեքստում էականորեն տարբերվում է մյուսներից, որ, չունենալով սեփական ածխաջրածինների պաշարներ և անմիջական ելք դեպի ծով, տարածաշրջանի բարդ և ոչ միանշանակ քաղաքատնտեսական գործընթացների պայմաններում փորձում է լուծել իր էներգետիկական անվտանգության անհրաժեշտ մակարդակի ապահովման հիմնախնդիրները:

Վերջին տարիներին էներգետիկական հատվածում պետական քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել էներգետիկ ռեսուրսների՝ դրսի մատակարարումներից երկրի կախվածության նվազեցմանը, ինչպես նաև էներգետիկական ռեսուրսների օգտագործման անվտանգության մակարդակի բարձրացմանը: Այդ կապակցությամբ հիմնական գերակայություններն են մնացել էներգահամակարգերի հուսալիության բարձրացումը, սեփական էներգետիկական ռեսուրսների առավելագույն օգտագործումը, ինչպես նաև ամբողջ էներգահամակարգի ֆինանսա-տնտեսական գործունեության հաշվեկշռվածությունը: Այս համատեքստում առավել կարևորվում է փոքր էներգետիկայի ոլորտի զարգացման խնդիրների լուծումը, էներգիայի աղբյուրների բազմազանացումը, էներգախնայողական տեխնոլոգիաների նշակումն ու ներդրումը:

Էներգետիկական համակարգում փոքր էներգետիկայի ներդրումը կբարձրացնի էներգամատակարարման հուսալիությունը և կայունությունը, թույլ կտա նվազեցնելու թունավոր և աղտոտող նյութերի արտանետումը մթնոլորտ և մեծացնելու էներգամատակարարման շահավետությունը: Այդ կապակցությամբ փոքր էներգետիկայի զարգացման միտումների՝ հանրապետությունում կուտակված գիտատեխնիկական ներուժի օգտագործման հնարավորությունների ուսումնասիրությունը հանդիսանում է տնտեսագիտության հրատապ ուղղություններից մեկը:

Փոքր էներգետիկական Հայաստանում զարգանում է բարդ տնտեսական և քաղաքական պայմաններում: Փոքր էներգետիկայի օբյեկտների քանակի ավելացումը արգելակվում է այնպիսի բացասական երևույթներով, ինչպիսիք են պետության կողմից ֆինանսական օգնության բացակայությունը, ոչ կատարյալ օրենսդրությունը, հարկային համակարգը և այլն: Այդպիսի պայմաններում անհրաժեշտաբար թելադրվում են այնպիսի մեխանիզմների ստեղծումը, որոնք կապահովեն փոքր էներգետիկայի կայուն զարգացումը՝ վերականգնվող ռեսուրսների հիմքի վրա:

Հայաստանում փոքր ենթագետիկայի զարգացման առանձնահատկությունների բացահայտումը և դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությունը կարող է նպաստել տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը: Միաժամանակ տնտեսական գործընթացների շարունակվող փոփոխականությունը և հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը ակնհայտորեն պահանջում են փոքր ենթագետիկայի պետական աջակցության հանակարգի կատարելագործում և այդ ոլորտի կազմակերպությունների տնտեսական զարգացումը խթանող պետական քաղաքականության իրականացում: Փոքր ենթագետիկայի զարգացման խնդիրների լուծումը պահանջում է նաև նրա արդյունավետության գնահատման մեթոդական դրույթների մշակում, որոնցում հաշվի կառնվեն սոցիալ-տնտեսական պայմանները և բնապահպանական հետևանքները:

Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը և դրանց լուծման մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

**Հետազոտության առարկան և օբյեկտը:** Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետությունում փոքր ենթագետիկայի զարգացման և արդյունավետության գնահատման տեսական և գործնական հարցերի համալիրն է:

Հետազոտության օբյեկտը Հայաստանում ենթագաապահովման և ենթագաապասարկման համակարգում փոքր ենթագետիկայի կազմակերպություններն են, որանցում իրականացվող տնտեսական գործընթացները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակը Հայաստանում ենթագաապահովման և ենթագաապասարկման համակարգում փոքր ենթագետիկայի զարգացման հայեցակարգային դրույթների և տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումների մշակումն է:

Հետազոտության նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ խնդիրները.

1. Ղիտարկել ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությունները, տնտեսական, ֆինանսական և օրենսդրական հիմնահարցերը, այդ ոլորտի վրա ազդող և զարգացմանը խոչընդոտող գործոնները:
2. Հետազոտել փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության առանձնահատկությունները ծառայությունների ոլորտում և գնահատել դրա դերն ու նշանակությունը տնտեսության զարգացման գործում

3. Բացահայտել փոքր էներգետիկայի զարգացման նախադրյալները և հնարավորությունները ԳԳ-ում:
4. Ուսումնասիրել փոքր էներգետիկայի զարգացման սկզբունքները, խնդիրները և օրենսդրական ապահովման մեխանիզմները ԳԳ-ում:
5. Վերլուծել փոքր էներգետիկայի ձևավորման միջազգային փորձը, վեր հանել ոլորտի զարգացման միտումները, նորամուծական ուղղությունները և ԳԳ-ում դրանց կիրառման նպատակահարմարությունը:
6. Ուսումնասիրել փոքր էներգետիկայի օբյեկտների զարգացման արդյունավետության գնահատման մեթոդական հիմունքները:
7. Մշակել փոքր էներգետիկայի օբյեկտների գործունեության տարբեր մակարդակներում արդյունավետության գնահատման տեսամեթոդական և գործնական դրույթները:

***Չետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:***

Առենախոսությունում կատարված տեսական հետազոտությունների, վերլուծությունների ու գիտական ընդհանրացումների արդյունքում ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները և գիտական նորույթը.

1. Հիմնավորվել է փոքր էներգետիկայի օբյեկտների գործունեության արդյունավետությունը էներգաապահովման և էներգասպասարկման համակարգում, բացահայտվել են փոքր էներգետիկայի զարգացման գործնական հնարավորությունները և հեռանկարները ԳԳ-ում:
2. Ձևակերպվել են փոքր էներգետիկայի զարգացման հայեցակարգային դրույթները, և հիմնավորվել ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները ԳԳ-ում:
3. Հստակեցվել են փոքր էներգետիկայի արդյունավետության տեսամեթոդական և գործնական դրույթները, տնտեսական արդյունավետության դասական մոդելների հարմարեցմամբ վերաներկայացվել են փոքր էներգետիկայի օբյեկտների գործունեության տարբեր մակարդակներում արդյունավետության գնահատման չափանիշները:

***Չետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:***

Չետազոտության համար տեսական հիմք են ծառայել տնտեսագիտության տեսության հիմնական դրույթները, փոքր և միջին ձեռնարկատիրությանն առնչվող հայրենական և արտասահմանյան գիտնականների աշխատանքները, էներգետիկայի

զարգացմանը նվիրված հետազոտությունները, գիտական հրապարակումներն ու հոդվածները:

Տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրերը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տեղեկատվական և վերլուծական նյութերը, էներգետիկային առնչվող միջազգային կազմակերպությունների փաստաթղթերը, համացանցային տեղեկատվական համակարգի նյութերը :

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են՝ տնտեսության զարգացման և էներգետիկայի հատվածին վերաբերող ՀՀ օրենսդրության, ՀՀ կառավարության և համապատասխան մարմինների կողմից մշակված մեթոդական ու նորմատիվային ակտերը, միջազգային սլոակտիկայում կիրառվող իրավական և հայեցակարգային փաստաթղթերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, գրաֆիկական, համեմատական, վիճակագրական և տնտեսամաթեմատիկական վերլուծությունների մեթոդներ:

***Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:***

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն: Հետազոտության ընթացքում ստացված դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները կարող են օգտագործվել փոքր էներգետիկայի տնտեսական արդյունավետության գնահատման տեսական և գործնական հետազոտ մշակումներում: Հետազոտության գործնական արդյունքները կարող են կիրառվել ՀՀ կառավարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից էներգետիկայի ոլորտում մշակվող ռազմավարական փաստաթղթերի, զարգացման ծրագրերի, էներգետիկայի հատվածի բարեփոխումների վերաբերյալ իրավական ակտերի, մեթոդաբանական և նորմատիվային փաստաթղթերի մշակման ընթացքում:

Ատենախոսության հիմնական արդյունքները, տեսամեթոդական նյութերը, ընդհանրացումները և վերլուծությունները կարող են օգտակար լինել փոքր էներգետիկայի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար և ներառվել բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ուսումնական ծրագրերում:

***Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:***

Ատենախոսության տեսամեթոդական նյութերը, ընդհանրացումները և վերլուծությունները կատարվել են փոքր էներգետիկայի օբյեկտների օրինակով:

Չետագոտության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) «Էներգետիկայի էկոնոմիկա և կառավարում» ամբիոնում: Ատենախոսության գիտական և կիրառական արդյունքները հեղինակի կողմից ներկայացվել են 2011 թ. ՀՊԵՀ (Պոլիտեխնիկ) տարեկան գիտաժողովում:

Աշխատանքի հիմնական դրույթները հրապարակված են չորս գիտական հոդվածներում:

***Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:*** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը պարունակում է 16 աղյուսակ, 6 նկար: Ատենախոսության ծավալը կազմում է 139 էջ:



## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, գիտական նորությը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին «**Փոքր և միջին ձեռնարկատիրությունը ծառայությունների ոլորտում**» գլխում դիտարկվել են փոքր և միջին ձեռնարկատիրության հասկացությունը, էությունը և դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում, վերլուծվել են ծառայությունների ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները, բացահայտվել են փոքր էներգետիկայի զարգացման տեսական հիմքերը և նորամուծական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացումը ներկայումս Հայաստանի տնտեսության գերակա ուղղություններից է:

Իրենց տարածվածությամբ փոքր և միջին կազմակերպությունները մեծ ազդեցություն են թողնում երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման վրա: Փոքր և միջին ձեռնարկատիրության տարածվածությունը արդյունք է ձեռնարկատիրական կառուցվածքներիի խիտ ճյուղավորվածության, որն անմիջական կապ ունի սպառողների լայն զանգվածների հետ: Շուկայական իրավիճակների տատանումներին արագ արձագանքելը պայմանավորված է կազմակերպությունների փոքր չափերով, կառավարչական, տեխնոլոգիական և արտադրական ճկունությամբ, ինչը թույլ է տալիս ցանկացած պայմաններում վերսկսել տնտեսական գործունեությունը:

Տնտեսավարման ներկա պայմաններում փոքր ձեռնարկատիրությունն առավել կարևոր տեղ է զբաղեցնում ապրանքների և ծառայությունների արտադրության, մասնավորապես գիտատեխնիկական և նորամուծությունների ոլորտում: Փոքր կազմակերպությունները դարձել են ապրանքային և աշխատուժի շուկայի անբաժանելի մասը, որոնք, կապիտալի շուկայի հետ միասին, յուրաքանչյուր երկրում կազմում են հասարակական վերարտադրության համակարգը:

Ատենախոսությունում վեր են հանվել ՓՄՁ զարգացման հիմնական նախադրյալները և խնդիրները ՀՀ-ում և հիմնավորվել պետական աջակցության գործուն համակարգի մշակման անհրաժեշտությունը:

Բնակչության զբաղվածության և ըստ աշխատանքի նրա բաժանման ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման համաշխարհային միտումները վկայում են

հասարակության կողմնորոշման մշտական ուժեղացումը նյութական և ոչ նյութական ծառայությունների ընդարձակման ուղղությամբ:

Տնտեսության ժամանակակից համակարգում հասարակական արտադրության մեջ բնորոշ է ոչ նյութական ռեսուրսների՝ հասարակության մտավոր և կրթական ներուժի (կրթություն, մշակույթ, որակավորում, տեղեկատվություն, ձեռնարկատիրական արվեստ և այլն), ինչպես նաև սպասարկման ոլորտի այլ ճյուղերի գործունեության արդյունքների վերափոխումը զարգացած շուկայական տնտեսությամբ հասարակության զարգացման որոշիչ գործոնի: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ սպասարկման ոլորտի ճյուղերը հանդիսանում են զարգացման գերակայության հիմք և կարող են արագ կերպով վերափոխվել շուկայական տնտեսության, այլև այն պատճառով, որ մարդու կենսագործունեության և արտադրության զարգացման մեջ սպասարկման ոլորտի դերն ու նշանակությունը անհամեմատ աճում է և վերածվում զբաղվածության առաջատար գործոնի:

Այն փաստը, որ ծառայությունները ստեղծվում և օգտագործվում են միաժամանակ և այդ կերպ չեն կարող պաշարվել, ծառայությունների մենեջմենթի բնորոշ առանձնահատկությունն է: Ծառայությունների պաշարների ստեղծման անհնարինությունը խոչընդոտում է ավանդական արտադրական ռազմավարության օգտագործմանը, այն է՝ հույս դնել պաշարների վրա՝ որպես պահանջարկի տատանումների խաթեցման միջոցի: Ծառայությունները գործում են որպես բաց համակարգեր, դրանց նկատմամբ պահանջարկի փոփոխությունների ամբողջական ներգործությամբ:

Ծառայությունների աճը ԲՀ-ում զբաղվածության ոլորտում դրական տեղաշարժերի պատճառ դարձավ, ինչի մասին վկայում են աղյուսակ 1-ի տվյալները:

Աղյուսակ 1

1996-2011թթ. ԲՀ տնտեսության մեջ զբաղվածության ճյուղային կառուցվածքը (%)<sup>1</sup>

Գործունեության բնագավառը	1996	1998	2000	2002	2004	2006	2008	2011
Գյուղատնտեսություն	25.5	39.4	44.4	45.3	46.9	46.2	44.2	38.9
Արդյունաբերություն	21.2	14.3	14.1	12.9	12.9	12.9	11.4	11.0
Շինարարություն	1.7	1.5	3.6	3.3	3.1	2.7	5.4	5.7
Ծառայություն	51.6	44.8	37.9	38.5	37.1	38.2	39.0	44.4

<sup>1</sup> www.annstat.am, Yearbooks 2001-2012

Աղյուսակից երևում է, որ 2011թ. ՀՀ-ի արդյունաբերությանը և շինարարությանը բաժին էր հասնում զբաղված բնակչության 16.7%-ը, այն դեպքում, երբ ծառայությունների ոլորտին բաժին էր ընկնում զբաղված բնակչության 44.4%-ը: Զբաղված բնակչության մեծամասնությունը ձևավորում է շուկայի ենթակառուցվածքը առևտուրը, տրանսպորտը, առողջապահությունը, կրթությունը, կառավարումը և սպասարկման այլ ոլորտները:

Հայաստանում էներգամատակարարման կենտրոնացված համակարգի պայմաններում մեծ հնարավորություններ կան փոքր էներգետիկայի զարգացման համար:

Հայաստանում փոքր էներգետիկայի կազմակերպման և զարգացման մակարդակի և միտումների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու մի շարք մեկնաբանություններ:

Փոքր էներգետիկայի զարգացման արդյունավետ ուղղությունների սահմանումը հիմնվում է ընդհանուր տեսական հիմքերի վրա, որոնք ընդգրկում են տնտեսական համակարգի զարգացման նպատակների և առաջադրված խնդիրների շրջանակները, ինչպես նաև դրանց լուծման համար անհրաժեշտ համալիր և համակարգային գնահատման մեթոդոլոգիական մոտեցումների մշակումը: Կարևորվում է նաև զարգացման համար նախընտրելի և առավել արդյունավետ եղանակների սահմանման համար տարբեր տեսակի տեխնիկա-տնտեսական հաշվարկային մեթոդների մշակումը:

Փոքր էներգետիկայի զարգացումը հիմնականում տարվել է էներգառեսուրսների ավանդական տեսակների՝ պինդ, հեղուկ և գազային օրգանական վառելիքի հիման վրա, ինչպես նաև հիդրոռեսուրսների օգտագործմամբ: Հետազոտությունները վկայում են, որ փոքր էներգետիկայի ընդհանուր բաժնում ավանդական էներգառեսուրսներին բաժին է ընկնում մոտավորապես 97% արդյունահանվող էլեկտրական էներգիան և 98% ջերմային էներգիան:

Փոքր էներգետիկայի զարգացման հեռանկարային ուղղությունների սահմանման ժամանակ անհրաժեշտ է մշակել նորամուծական պլաններ, որոնք իրականացվում են գործարար ծրագրերի միջոցով: Նորամուծական գործունեությունը նախադրյալներ է ստեղծում էներգետիկայի ոլորտում նոր, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման համար:

Էներգետիկ համակարգում կիրառվող նորամուծություններ են հանդիսանում նոր էլեկտրական և ջերմային էներգիայի մշակման համար կատարելագործված տեխնոլոգիաների ստեղծումը և կիրառումը, տեխնոլոգիական կորուստների կրճատումը, սարքավորումների արդիականացումը, կառավարման ավտոմատացված

համակարգերը, ինչպես նաև կառավարման և գործունեության այլ շրջանակներ, որոնք ապահովում են արտադրության տեսակարար ծախսերի կրճատումը:

Չայաստանում գիտահետազոտական կազմակերպությունների մշակումների արդյունքները զգալիորեն թույլ են և հետ են մնում Ճյուղին վերաբերող արտասահմանյան, մասնավորապես զարգացած երկրների փոքր էներգետիկայի օբյեկտներով հատուկ մասնագիտացված Ճյուղային կառուցվածքներից: Գիտահետազոտական սեկտորի մշակումները առավել նպատակահարմար է իրագործել գիտական ուժերի համակենտրոնացմամբ, որոնք կառաջադրեն և կլուծեն խնդիրներ՝ գլխամասային գիտահետազոտական և նրա առանձին փորձակոնստրուկտորական, տեխնիկատնտեսական և նորամուծական տեխնոլոգիական ստորաբաժանումների կողմից ստեղծված բազայի օգնությամբ:

Էներգասարքավորումների արտադրության շրջանակներում անհրաժեշտ է ունենալ էներգամեքենաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերությամբ խորապես մասնագիտացված ձեռնարկություններ, խորացնել գիտահետազոտական, ներդրումային կազմակերպությունների համագործակցությունը, ընդլայնել փորձնական արտադրական հնարավորությունները, որոնք էլ իրենց հերթին պայմաններ կստեղծեն հարմարվելու շուկայական պահանջներին:

Առենախոսության երկրորդ՝ **«Փոքր էներգետիկայի զարգացման հայեցակարգային դրույթները»** գլխում ուսումնասիրվել են ԲԳ-ում փոքր էներգետիկայի ձևավորման սկզբունքները, խնդիրները և զարգացման հիմնական ուղղությունները, քննարկվել են փոքր էներգետիկայի զարգացման օրենսդրական ապահովման և էներգետիկ անվտանգության հարցերը և դրանց լուծման ուղիները Չայաստանի հանրապետությունում:

Փոքր էներգետիկայի զարգացման հիմնական նպատակն է շրջանների էներգաապահովման և դրանցում բնակվող բնակչության բնապահպանական անվտանգության մակարդակի բարձրացումը՝ ի հաշիվ տեղային էներգառեսուրսների ներուժի, արտադրական և կոմունալ-կենցաղային թափոնների արդյունավետ օգտագործման: Այս նպատակի իրականացումը պահանջում է արտադրական, տեխնոլոգիական, բնապահպանական, սոցիալական, տնտեսական և նորմատիվա-իրավական բնույթի մի շարք հիմնական խնդիրների լուծում:

Չայաստանի հանրապետությունում փոքր էներգետիկայի օբյեկտների զարգացման հիմնական խնդիրներին են վերաբերում՝

- էներգամատակարարման հուսալիության բարձրացումը,

- Էներգետիկայի օբյեկտների առավելագույն մոտեցումը սպառողներին, ինչը հատկապես կարևոր է ոչ բարենպաստ բնակլիմայական և մետրոլոգիական պայմանների դեպքում, ինչպես նաև էներգամատակարարման ենթակառուցվածքի զարգացման ցածր մակարդակի պայմաններում,
- տնտեսական գործունեության ուղղությունների ընդլայնումը, հատկապես այն ձեռնարկությունների և ճյուղերի գծով, որոնք ապահովում են էներգառեսուրսների արտադրությունը և փոխադրումը,
- բնապահպանական իրադրության բարելավումը,
- ածխաջրածնային հումքի սպառված հանքատեղերի հիմնումը,
- էլեկտրական և ջերմային հզորությունների պահուստի ստեղծումը:

Ելված խնդիրների հեռանկարային լուծումը և համապատասխանաբար, փոքր էներգետիկայի զարգացումը վառելիք-էներգետիկական համալիրի ճյուղերի բարեփոխման փուլում պետք է հիմնվի հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- պետության և առանձին շրջանների էլեկտրա և ջերմամատակարարման համակարգի ամբողջականություն,
- փոքր էներգետիկայի զարգացման ծրագրերի և նախագծերի սոցիալական կողմնորոշվածություն,
- փոքր էներգետիկայի օբյեկտների ստեղծման և գործարկման այլընտրանքայնություն,
- փոքր էներգետիկայի հզորությունների ստեղծման և գործարկման շարժունություն,
- փոքր էներգետիկայի մրցունակություն, հաշվի առնելով սոցիալական և բնապահպանական արդյունքները:

Փոքր էներգետիկայի զարգացման առանցքային խնդիրների վերլուծությունը առաջին հերթին պահանջում է ներքին և արտաքին միջավայրերի իմացություն: Չենց տնտեսական, կազմակերպակառավարչական, նորմատիվաիրավական, գիտատեխնիկական միջավայրերն են բնորոշում այն պայմանները, նախադրյալները և սահմանափակումները, որոնք հիմք են հանդիսանում էլեկտրական և ջերմային էներգիայի պահանջարկի ձևավորման համար ներքին և արտաքին շուկաներում:

Ատենախոսությունում հիմնավորվել են Հայաստանում փոքր էներգետիկայի զարգացման և արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները: Դրանք են՝

- գոյություն ունեցող էներգաաղբյուրների վերակառուցումը,

- բարձր օգտակար գործողությամբ ժամանակակից սարքավորումների կիրառումը,
- էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների օգտագործումը,
- կենտրոնացված էլեկտրամատակարարման շրջանակների ընդլայնումը,
- էներգիայի վերականգնվող աղբյուրների առավել լայն կիրառումը:

Հայաստանի նման փոքր և օրգանական վառելիքատեղեկություններով ռեսուրսներով աղքատ երկրի համար ինչպես էներգախնայողությունը, այնպես էլ վերականգնվող ռեսուրսները ուղղված են մեկ ընդհանուր նպատակի՝ Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության ամրապնդմանը: Ռեսուրսախնայողության միտումները, բնապահպանական գերակայությունները և էներգետիկ անվտանգության հասնելու պետության ծառուսումները փոքր էներգետիկայի զարգացումը դասում են պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքին: Այդ կապակցությամբ փոքր էներգետիկայի պետական աջակցության կարևոր բաղադրիչները պետք է լինեն պետական սուբսիդավորումը, նորամուծական տեխնոլոգիաների և գիտահետազոտական աշխատանքների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Այլընտրանքային էներգառեսուրսների զարգացումն ու օգտագործումը զգալիորեն կնպաստի Հայաստանի էներգետիկ համակարգի անկախության բարձրացմանը և կլուծի այնպիսի կարևոր բնապահպանական խնդիր, ինչպիսին քերմոցային գազերի արտանետումների մակարդակի կրճատումն է: Վավերացնելով Կիոտոյի արձանագրությունը՝ Հայաստանը հնարավորություն ունի իրականացնելու համատեղ ծրագրեր այլընտրանքային էներգառեսուրսների ոլորտում:

Ատենախոսության երրորդ՝ **«Փոքր էներգետիկայի արդյունավետության գնահատումը»** գլխում ուսումնասիրվել են փոքր էներգետիկայի զարգացման միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում, տնտեսական արդյունավետության դասական մոդելների հարմարեցմամբ վերաներկայացվել են փոքր էներգետիկայի օբյեկտների գործունեության տարբեր մակարդակներում արդյունավետության գնահատման չափանիշները:

Ձրկված լինելով սեփական օրգանական վառելիքային ռեսուրսներից՝ Հայաստանն այնուամենայնիվ ունի վերականգնվող էներգիայի զգալի պաշարներ:

Դրանք առաջին հերթին հիդրոռեսուրսներն են, որոնց տեսական մեծությունը գնահատվում է 21.8 մլրդ. կՎտժ, տեխնիկապես մատչելի ներուժը՝ 7-8 մլրդ. կՎտժ, տնտեսապես հիմնավորված հիդրոռեսուրսները կազմում է մոտ 3.6 մլրդ կՎտժ, որից 1.5 մլրդ կՎտժ արդեն յուրացված է, իսկ մնացած մասի յուրացումն ակնկալվում է իրականացնել

առաջիկա 15 տարիների ընթացքում<sup>2</sup>:

Այդպիսի արտադրանք հնարավոր է ստանալ օգտագործելով երկու գոյություն ունեցող հիդրոէլեկտրակայանների համալիրները՝ Սևան-Յրազղանի ու Որոտանի, փոքր ՅԷԿ-երը և կառուցելով նոր խոշոր ՅԷԿ-եր: Փոքր ՅԷԿ-երի տնտեսապես հիմնավորված ներուժը կազմում է 800 - 850 մլն. կվտժ, որից 200-220 մլն. կվտժ արդեն արտադրվում է առկա փոքր ՅԷԿ-երում<sup>3</sup>:

Փոքր հիդրոէլեկտրակայանների ամփոփ ցուցանիշներն ըստ տարիների բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Գործող և գործարկման ենթակա ՓՅԷԿ-երի ամփոփ ցուցանիշներն ըստ տարիների<sup>4</sup>

Ցուցանիշի անվանումը		Չափի միավոր	2009 հունվար	2010 հունվար	2011 հունվար	2012 հունվար	2013 հունվար
ՓՅԷԿ-երի քանակը	գործարկման ենթակա	հատ	36	21	7	3	137
	գործող	հատ	70	106	127	134	
ՓՅԷԿ-երի հզորությունը	գործարկման ենթակա	կվտ	57 915	65 902	20 300	9 400	242 427
	գործող	կվտ	88 910	146 825	212 727	233 027	
ՓՅԷԿ-երի էլեկտրական էներգիայի տարեկան արտադրությունը	գործարկման ենթակա	մլն կվտժ	221,4	226,1	60,6	35,9	846,8
	գործող	մլն կվտժ	302,9	524,3	750,3	810,9	
ՓՅԷԿ-երում իրականացման ենթակա ներդրումների կանխատեսվող ծավալը	գործարկման ենթակա	մլն դրամ	22 334	25 656	9 864	4 667	62520
	գործող	մլն դրամ	-	22 334	47 990	57 854	

<sup>2</sup>«ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ», ՀՀ կառավարություն 2011 թ.

<sup>3</sup>ԳԼՈՒԲՈՒՄ: Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն, Ե՛ թիվ 5,2009թ

<sup>4</sup> <http://www.psrc.am>

Այդուսակից երևում է, որ 2013թ.-ին 2009 թ.-ի համեմատ գործող ՓՅԷԿ-երի քանակը գրեթե կկրկնապատկվի, իսկ էլեկտրաէներգիայի սպասվող տարեկան արտադրանքը կեռապատկվի:

Եթե ՀՀ էներգետիկայի ռազմավարությունը ուղղված լինի միայն ՀԷԿ-երի կառուցմանը և անտեսվի ատոմային էներգետիկայի և էներգիայի այլընտրանքային աղբյուրների զարգացումը, ապա մոտ ապագայում մենք կարող ենք հայտնվել 1992-1995 թթ. էներգետիկ ճգնաժամի իրավիճակում:

Ներկայումս հանրապետությունում փոքր հիդրոէներգետիկայի հետագա զարգացման խոչընդոտները կրում են առավելապես իրավա – կազմակերպչական, գործառութային և ֆինանսավարկային բնույթ: Հիդրոէներգետիկ ներուժ ունեցող շատ գետերում չեն կատարվել և այժմ էլ չեն կատարվում ելքերի չափումներ և զրանցումներ:

Անհերքելի է այն փաստը, որ պետք է յուրացնել ՀՀ գետերի հնարավոր տեխնիկական հասանելի էներգաներուժը՝ գետերի վրա փի ՀԷԿ-եր կառուցելով:

Սակայն միայն ՀԷԿ-երի վրա հույս դնելը, Հայաստանի նման երկրների համար կարող է ունենալ կործանարար հետևանքներ: ՀԷԿ-երը պետք է կառուցվեն և կառուցման իրավունքները պետք է ձեռք բերվեն մրցութային եղանակով: Անհրաժեշտ է մրցույթներին ներգրավել օտարերկրյա ներդրողներին: Անհրաժեշտ է նաև սեփականաշնորհել ՀՀ տարածքում գտնվող ՀԷԿ-երը, սակայն նպատակահարմար չէ բոլոր ՀԷԿ-երի սեփականության իրավունքը միաժամանակ տալ մեկ սեփականատիրոջ:

Նորվեգիական SWECO, Gauldal Consult ընկերության հետ համատեղ հայկական խորհրդատվական «Հիդրոէներգետիկա» ՍՊԸ անցկացված հետազոտության արդյունքները թույլ են տվել բացահայտելու Հայաստանում փոքր էներգետիկայի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները:

«Հայաստանի էներգետիկ անվտանգությանն ուղղված փոքր հիդրոէներգետիկայի կայուն զարգացման» նորվեգահայկական ծրագրի շրջանակներում քննարկվող գլխավոր թեմաները կարող են լինել.

- ուղիներ, որոնք կխթանեն հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության վերաբերյալ եզրակացություն տալու գործընթացին՝ տեղական և տարածքային մակարդակում,
- տեղական և տարածքային կառավարման մարմինների ներգրավումը՝ հիդրոէներգետիկայի զարգացումից օգուտներ ստանալու նպատակով,



- մեղմացնող միջոցառումներ, որոնք ուղղված են կենսաբազմազանության, ջրային էկոհամակարգի, ձկների և բուսականության վրա ազդեցության նվազեցմանը,

- միջազգային փորձի գնահատումը և առաջադեմ չափանիշների կիրառումը:

Ատենախոսությունում մշակված փոքր էներգետիկայի զարգացման տարբերակների տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումը զարգացնում է նախորդները և հիմնվում է հիերարխիայի տարբեր մակարդակների չափանիշային ցուցանիշների համեմատության վրա: Մեթոդական մոտեցման հիմնական սկզբունքներն են.

- հիերարխիա. առանձնացվում են երկու՝ իրար հետ կապակցված տարածքային մակարդակներ՝ շրջանային և տեղային,
- համակողմանիություն. դիտարկվում են էներգամատակարարման տեխնոլոգիապես նպատակահարմար բոլոր տարբերակները,
- բազմաչափանիշություն՝ որոշումը ընդունելիս,
- գերակայություն. սոցիալական ուղղվածության հարցերի լուծման առաջնություն:

Տարբեր մակարդակներում հետազոտությունների կատարման համար էլեկտրաէներգիայի մատակարարման լուծվող խնդիրներին հարմարեցվել է արտադրա-ֆինանսական իմիտացիոն մոդելը, որն իրացվում է ներդրումային ծրագրերի և դրանց ընտրության տնտեսական արդյունավետության գնահատման համաշխարհային պրակտիկայում ընդունված մեթոդիկայով:

Արտադրա-ֆինանսական մոդելը հնարավորություն է ընձեռում հաշվի առնել հետևյալ գործոնները.

- ներդրումների ներգրավման տարբեր ձևերը,
- ծախսերի և արդյունքների տարբեր ժամկետները,
- հարկերի և դոտացիաների համակարգը:  
Ներդրումային ծրագրերի տարբեր ձևերը ներառում են.
- առևտրային բանկերից վարկերի ներգրավումը հաշվի առնելով ներդրված միջոցների և համապատասխան տոկոսների հետ վերադարձը,
- արտոնությունների կամ անտոկոս վարկերի ստացման հնարավորությունը,
- դոտացիաների ստացման հնարավորությունը:

Սոդելում ֆինանսական հոսքերի դինամիկայի վերլուծության համար նկարագրվում են 15-20 տարի ժամանակային կտրվածքները: Հաշվի է առնվում նաև ժամանակի գործոնը, որն արտացոլում է տարբեր տարիներին կատարվող ծախսերի

տնտեսական անհավասարությունը, ինչպես նաև ներկա ծախսերի և ապագա արդյունքների անհամադրելիությունը: Տարբեր ժամանակների ցուցանիշների չափակցումը իրականացվում է դրանց միարժեքայնության բերելու ճանապարհով՝ օգտագործելով դիսկոնտի գործակիցը, որը ներդրողի համար ընդունելի է որպես կապիտալի եկամուտի նորմա:

Նախագծերի արդյունավետության կարևորագույն ցուցանիշը զուտ ընթացիկ արժեքն է (ՉԸԱ): Ներդրողի տեսանկյունից տվյալ նախագծի արդյունավետության ընդունման համար անհրաժեշտ է, որ նախագծի զուտ ընթացիկ արժեքը միշտ լինի դրական, իսկ այլընտրանքային նախագծերի համեմատության ժամանակ առավել նախընտրելի է այն տարբերակը, որի զուտ ընթացիկ արժեքն ամենամեծն է:

Չուտ ընթացիկ արժեքի ցուցանիշը, այլ կերպ ասած ինտեգրալային տնտեսական արդյունքը կամ զուտ դիսկոնտավորվող եկամուտը իրենից ներկայացնում է կանխիկ դրամական դիսկոնտավորվող հոսք, որը կուտակվում է նախագծի իրականացման ժամանակաշրջանում:

Շահութաբերության ինդեքսը (ՇԻ) հաշվարկվում է որպես դրամական հոսքի դիսկոնտավորվող տարրերի ընդհանուր մեծության և դիսկոնտավորված կապիտալ ներդրումների հարաբերություն: Շահութաբերության ինդեքսը հավասար է զուտ ընթացիկ արժեքի և կապիտալ ներդրումների դիսկոնտավորված ծավալի հարաբերությանը՝ մեծացրած միավորով.

$$\text{ՇԻ} = \frac{\text{ՉԸԱ}}{\sum_{t=t_0}^T C_t d_t} + 1$$

որտեղ  $T$  –ն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածն է,

$t_0$  – ն՝ շինարարության սկսման տարին,

$C_t$  – ն՝  $t$  տարում ներդրված կապիտալի մեծությունը, մլն.դր.:

$d_t$  – ն՝ դիսկոնտավորման գործակիցը:

Շահութաբերության ինդեքսի մեծությունը սերտորեն կապված է զուտ ընթացիկ արժեքի հետ և ընդհանուր դեպքում, եթե այն դրական է, ապա շահութաբերության ինդեքսը մեծ է մեկից:

Օգտագործելով արտադրա-ֆինանսական մոդելը՝ հնարավոր է նաև իրականացնել վառելիքի գնի, էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի սակագների, բյուջեից ներգրավող կապիտալ ներդրումների հիմնական չափանիշների զգայունության գնահատում կախված ելակետային պայմանների փոփոխությունից:

Ատենախոսության «*Եզրակացություններ*» բաժնում ամփոփ ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները: Դրանք հետևյալն են.

1. Փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորման և զարգացման կարևորագույն տնտեսական պայմանը շուկայական հարաբերությունների արմատավորումն է, զարգացած շուկայական ենթակառուցվածքների առկայությունը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ միայն շուկայական տնտեսությանը համապատասխանող ենթակառուցվածքների ձևավորումը ինքնաբերաբար չի կարող լուծել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խնդիրները: Տնտեսության այդ ոլորտն ունի իրեն յուրահատուկ միջավայրը՝ իր առանձին օղակներով և որի զարգացումը կարող է իրականացվել միայն պետական աջակցության շնորհիվ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական խնդիրներն են՝

- հարկային արտոնությունների բացակայությունը, ինչպես նաև օրենսդրության մեջ կատարվող հաճախակի փոփոխությունները,
- ֆինանսավորման հետ կապված դժվարությունները,
- ներքին շուկայի ծավալի փոքրությունը և բնակչության ցածր զնոդունակությունը,
- բիզնես տեղեկատվական և խորհրդատվական համակարգի բացակայությունը,
- գործարարության ոլորտի կադրերի ուսուցման և վերապատրաստման համակարգի բացակայությունը:

2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորման համար խթան հանդիսացավ զարգացած երկրներում կապիտալի խոշորացման միտումների դանդաղումը: Դրա հիմնական պատճառը տնտեսության մեջ դեպի ծառայությունների ոլորտը կառուցվածքային տեղաշարժերն էին: Փոքր կազմակերպությունները ապահովում են սպասարկման ծառայությունների հիմնական ծավալն ամբողջ աշխարհում, ինչը վկայում է տվյալ ձևի կազմակերպությունների կարևորության մասին ծառայությունների, այդ թվում և էներգետիկայի ոլորտում:

3. ՀՀ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ծառայությունների ոլորտի ընդհանուր մասնաբաժինը ՀՆԱ-ում աճում է: 1996-2011թթ. այն աճել է 10.3-ից մինչև 23%: Այնուամենայնիվ, ըստ դիտարկվող ոլորտի աճի մակարդակի, Հայաստանը դեռևս նշանակալիորեն ետ է մնում առաջատար պետություններից:

Ծառայությունների նշված աճը ՀՀ-ում զբաղվածության ոլորտում դրական տեղաշարժերի պատճառ դարձավ: Ներկայումս ՀՀ-ի արդյունաբերությանը և շինարարությանը բաժին է հասնում զբաղված բնակչության 16.7%-ը (1996թ.-ին այն կազմում էր 25.7%), այն դեպքում, երբ ծառայությունների ոլորտին բաժին է ընկնում

զբաղված բնակչության 44.4%-ը: Չբաղված բնակչության մեծամասնությունը ձևավորում է շուկայի ենթակառուցվածքը՝ առևտուրը, տրանսպորտը, առողջապահությունը, կրթությունը, կառավարումը և սպասարկման այլ ոլորտները:

4. Փոքր եներգետիկան Հայաստանում զարգանում է բարդ տնտեսական և քաղաքական պայմաններում: Փոքր եներգետիկայի օբյեկտների քանակի ավելացումը արգելակվում է այնպիսի բացասական երևույթներով, ինչպիսիք են պետության կողմից ֆինանսական օգնության բացակայությունը, ոչ կատարյալ օրենսդրությունը և հարկային համակարգը և այլն: Այդպիսի պայմաններում անհրաժեշտաբար թելադրվում է այնպիսի մեխանիզմների ստեղծումը, որոնք կապահովեն փոքր եներգետիկայի կայուն զարգացումը՝ վերականգնվող ռեսուրսների հիմքի վրա:

5. Փոքր եներգետիկայի զարգացման հիմնական նպատակն է շրջանների եներգաապահովման և դրանցում բնակվող բնակչության բնապահպանական անվտանգության մակարդակի բարձրացումը՝ ի հաշիվ տեղային եներգառեսուրսների ներուժի, արտադրական և կոմունալ-կենցաղային թափոնների արդյունավետ օգտագործման: Նշված խնդիրների հեռանկարային լուծումը և համապատասխանաբար, փոքր եներգետիկայի զարգացումը պետք է հիմնվի հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- պետության և առանձին շրջանների էլեկտրա և ջերմամատակարարման համակարգի ամբողջականություն,
- փոքր եներգետիկայի զարգացման ծրագրերի և նախագծերի սոցիալական կողմնորոշվածություն,
- փոքր եներգետիկայի օբյեկտների ստեղծման և գործարկման այլընտրանքայնություն,
- փոքր եներգետիկայի հզորությունների ստեղծման և գործարկման շարժունություն,
- փոքր եներգետիկայի մրցունակություն հաշվի առնելով սոցիալական և բնապահպանական արդյունքները:

6. Հայաստանի հանրապետությունում փոքր եներգետիկայի օբյեկտների զարգացման հիմնական խնդիրներին են վերաբերում՝

- ընդհանուր տնտեսական միջավայրի վատթարացումը,
- տնտեսության բարեփոխումների ընթացքում եներգետիկայի խոշոր օբյեկտների հզորության պահուստների ավելացումը,
- փոքր եներգետիկայի կազմակերպչական ձևավորվածությունը,

- երկրում փոքր էներգետիկայի զարգացման համար անհրաժեշտ սարքավորումների բացակայությունը,
- փոքր էներգետիկայի օբյեկտների զարգացման անբավարար նորմատիվա-հրավական բազան,
- միավոր հզորության վրա կառավելիք ծախսերի փոքրացումը,
- էներգետիկ օբյեկտներում արտադրության ընթացիկ ծախսերի կրճատումը,
- էներգամատակարարման հուսալիության բարձրացումը,
- էլեկտրասարքավորումների հուսալիության բարձրացումը,
- կայանների արտանետումների կրճատումը:

7. Ատենախոսության մեջ հիմնավորվում է, որ Հայաստանում էներգետիկայի զարգացման հիմնական գործոններից մեկը պետք է լինի նորամուծական տեխնոլոգիաների ներդրումը, էներգիայի ոչ ավանդական վերականգնվող աղբյուրների օգտագործումը, որոնք ապահովում են էներգամատակարարման և էներգախմբայողության քանակական և որակական աճը: Փոքր էներգետիկայի զարգացման հեռանկարային ուղղությունների սահմանման ժամանակ անհրաժեշտ է մշակել նորամուծական պլաններ, որոնք իրականացվում են գործարար ծրագրերի միջոցով: Նորամուծական գործունեությունը նախադրյալներ է ստեղծում էներգետիկայի ոլորտում նոր, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման համար:

8. Բետուրսախմբայողության միտումները, բնապահպանական գերակայությունները և էներգետիկ անվտանգության հասնելու պետության ձգտումները փոքր էներգետիկայի զարգացումը դասում են պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքին: Այդ կապակցությամբ փոքր էներգետիկայի պետական աջակցության կարևոր բաղադրիչները պետք է լինեն պետական սուբսիդավորումը, նորամուծական տեխնոլոգիաների և գիտահետազոտական աշխատանքների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Այլընտրանքային էներգառեսուրսների զարգացումն ու օգտագործումը զգալիորեն կնպաստի Հայաստանի էներգետիկ համակարգի անկախության բարձրացմանը և կլուծի այնպիսի կարևոր բնապահպանական խնդիր, ինչպիսին ջերմոցային գազերի արտանետումների մակարդակի կրճատումն է:

9. Փոքր էներգետիկայի օբյեկտների առաջարկի և պահանջարկի համապատասխանության ապահովումը պահանջում է անհրաժեշտ մեթոդական մոտեցումների մշակում և, առաջին հերթին, դրանց կիրառման ոլորտի ուսումնասիրության հիման վրա պահանջարկի որոշակիացում: Այդ գործում սկզբունքային նշանակություն ունի Հայաստանի համրապետություն էներգետիկ

համակարգի զարգացման հիմնական ուղղությունների որոշակիացումը: Շուկայական տնտեսվարության չափանիշներին համապատասխանող տնտեսության կառուցվածքի ձևավորման պայմաններում հրատապ է դառնում նաև էներգետիկ ոլորտի կառուցվածքային վերազինման խնդիրը, փոքր էներգետիկայի հզորությունների կառուցվածքների լավարկումը:

10. Հայաստանում փոքր էներգետիկայի զարգացման և արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություններն են.

- գոյություն ունեցող էներգաաղբյուրների վերակառուցումը,
- բարձր օգտակար գործողությամբ ժամանակակից սարքավորումների կիրառումը,
- էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների օգտագործումը,
- կենտրոնացված էլեկտրամատակարարման շրջանակների ընդլայնումը,
- էներգիայի վերականգնվող աղբյուրների առավել լայն կիրառումը:

11. Գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են Հայաստանում վերականգնվող էներգետիկայի և հատկապես ՓՅԷԿ – երի զարգացումը: Ներկայումս հանրապետությունում փոքր հիդրոէներգետիկայի հետագա զարգացման խոչընդոտները կրում են առավելապես իրավա – կազմակերպչական, գործառության և ֆինանսավարկային բնույթ: Հիդրոէներգետիկ ներուժ ունեցող շատ գետերում չեն կատարվել և այժմ էլ չեն կատարվում ելքերի չափումներ և գրանցումներ:

12. Հայաստանի էներգետիկ անվտանգությանն ուղղված փոքր հիդրոէներգետիկայի կայուն զարգացման նորվեգահայկական ծրագրի շրջանակներում քննարկվող գլխավոր թեմաներ կարող են լինել.

- ուղիներ, որոնք կխթանեն հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության վերաբերյալ եզրակացություն տալու գործընթացին՝ տեղական և տարածքային մակարդակում,
- տեղական և տարածքային կառավարման մարմինների ներգրավումը՝ հիդրոէներգետիկայի զարգացումից օգուտներ ստանալու նպատակով,
- մեղմացնող միջոցառումներ, որոնք ուղղված են կենսաբազմազանության, ջրային էկոհամակարգի, ձկների և բուսականության վրա ազդեցության նվազեցմանը,
- միջազգային փորձի գնահատումը և առաջադեմ չափանիշների կիրառումը:

13. Ատենախոսությունում մշակված փոքր էներգետիկայի զարգացման տարբերակների տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդական

մոտեցումը զարգացնում է նախորդները և հիմնվում է հիերարխիայի տարբեր մակարդակների չափանիշային ցուցանիշների համեմատության վրա: Մեթոդական մոտեցման հիմնական սկզբունքներն են.

- հիերարխիա. առանձնացվում են երկու՝ իրար հետ կապակցված տարածքային մակարդակներ շրջանային և տեղային,
- համակողմանիություն. դիտարկվում են էներգամատակարարման բոլոր տեխնոլոգիապես նպատակահարմար տարբերակները,
- բազմաչափանիշություն՝ որոշումը ընդունելիս,
- գերակայություն. սոցիալական ուղղվածության հարցերի լուծման առաջնություն:

14. Փոքր էներգետիկայի զարգացման տարբերակների տնտեսական արդյունավետության գնահատման ատենախոսությունում ներկայացված մեթոդական մոտեցումը արտահայտվում է իմիտացիոն մոդելների տեսքով, քանի որ հենց իմիտացիոն մոդելավորման մեթոդներն են հնարավորություն տալիս օբյեկտի գործունեությունը ներկայացնել հիմնական տնտեսական ցուցանիշների փոփոխման դեպքում: Շրջանային մակարդակում փոքր էներգետիկայի զարգացման տարբերակների կիրառման տնտեսական արդյունավետության պայմանների որոշման համար մոդելի հիմքում դրված են խոշորացված տնտեսական հաշվարկները՝ ըստ բերված ծախսերի: Տեղային մակարդակում արդյունավետ տարբերակի ընտրությունը իրականացվում է նախագծի արդյունավետության գնահատման արտադրական-ֆինանսական մոդելի հիման վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Աղաջանյան Լ.Զ., Մեհրաբյան Մ.Ա., Փոքր և միջին ձեռնարկատիրության առանձնահատկությունները ծառայությունների ոլորտում: Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում: N 4, Երևան, 2011, էջ 77 - 83:

2. Աղաջանյան Լ.Զ., Մեհրաբյան Մ.Ա. Փոքր էներգետիկայի զարգացման տեսական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում: ՀՊԵՀ (Պոլիտեխնիկ) լրաբեր, գիտական հոդվածների ժողովածու: N 2, Երևան, 2012, էջ 708 - 712:

3. Մեհրաբյան Մ.Ա., Նորանուծական ռազմավարությունը էներգետիկայի ոլորտում: Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում: N 2, Երևան, 2012, էջ 139 - 145:

4. Մեհրաբյան Մ.Ա., Փոքր էներգետիկայի զարգացման տարբերակների տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդական մոտեցումները: Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա: N 9, Երևան, 2012, էջ 52 – 54:

**ЗАДАЧИ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В  
СФЕРЕ ЭНЕРГЕТИКИ РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 „Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 6-го июня 2013 года, в 15:30, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г.Ереван, ул. Налбандяна 128.

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена исследованию теоретических и практических проблем развития малого и среднего предпринимательства в сфере энергетики. С этой проблемой сталкивается множество организаций малой энергетики в Республике Армения, так как зачастую отсутствует комплексный механизм действий при принятии экономических решений.

В работе исследованы особенности малого и среднего предпринимательства в сфере услуг, раскрыты теоретические основы развития малой энергетики и инновационных направлений в РА, обсуждены принципы, проблемы формирования и основные пути развития малой энергетики в РА. Особое внимание уделено теоретическим и практическим возможностям и перспективам развития малой энергетики в Армении, разработаны методические подходы к оценке экономической эффективности вариантов развития малой энергетики.

Основной целью исследования является разработка методических подходов к оценке экономической эффективности и концептуальных положений развития малой энергетики в системе энергоснабжения и энергообслуживания.

Для осуществления цели исследования в диссертации были поставлены следующие задачи:

1. Рассмотреть пути развития малого и среднего предпринимательства, экономические, финансовые и законодательные проблемы, факторы влияющие на данную область и препятствующие ее развитию.
2. Исследовать особенности проявления малого и среднего предпринимательства в сфере услуг и оценить его роль и значение в деле развития экономики.



3. Раскрыть предпосылки и возможности развития малой энергетики в РА.
4. Исследовать принципы развития малой энергетики, проблемы и механизмы законодательного обеспечения в РА.
5. Изучить международную практику формирования малой энергетики, показать тенденции развития данной области, инновационные направления и целесообразность их применения в РА.
6. Исследовать методические основы оценки эффективности развития объектов малой энергетики.
7. Разработать теоретико-методические и практические принципы оценки эффективности деятельности объектов малой энергетики на разных уровнях.

Основные результаты и научная новизна заключаются в следующем:

1. Обоснована эффективность деятельности объектов малой энергетики в системе энергосбережения и энергообслуживания и выявлены практические возможности и перспективы развития малой энергетики в РА.
2. Разработаны концептуальные положения развития малой энергетики и обоснованы основные направления развития данной сферы в РА.
3. Сформулированы теоретико-методические и практические положения эффективности малой энергетики, при помощи адаптации классических моделей экономической эффективности были перепредставлены критерии оценки эффективности деятельности объектов малой энергетики на разных уровнях.

В результате всестороннего анализа деятельности объектов малой энергетики были выявлены основные направления внедрения подходов и принципов их развития, которые направлены на повышение эффективности малой энергетики в контексте развития энергетики РА.

Положения, выводы и предложения полученные при исследовании могут быть использованы в дальнейших теоретических и практических разработках при оценке экономической эффективности малой энергетики.

Результаты анализа, основные выводы и рекомендации, изложенные в диссертации, имеют практическую значимость и могут применяться в процессе осуществления и разработки стратегии развития энергетики РА, тем самым способствуя углублению, формированию и развитию механизмов повышения эффективности в сфере малой энергетики.

**MINAS AVETIQ MEHRABYAN**  
**PROBLEMS OF DEVELOPMENT OF SMALL AND MEDIUM ENTERPRISES**  
**IN ENERGY FIELD OF THE REPUBLIC OF ARMENIA**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 “Economics, Management of Economy and its Branches”.

The defence of the thesis will take place on June 6, 2013, at 15:30 o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics, to: 128 Nalbandyan str., Yerevan, 0025

**ABSTRACT**

This thesis is targeted to study theoretical and practical problems of small and medium enterprise development in energy field. Those problems are typical for many of the small energy enterprises of the Republic of Armenia and are a consequence of lack of integrated mechanisms for implementing actions when making economic decisions in this field.

In this work the peculiarities of small and medium enterprises in field of provision of service are studied, the economical basis and innovative directions for development of small energy field in the Republic of Armenia are discovered, the principles and problems of foundation and the main directions of development of small energy field in the Republic of Armenia are discussed. Researches of international practice of small energy field development in countries with developed market economies have been done to observe the possibilities of introduction of approaches and principles for small energy development in energy field of the Republic of Armenia. Particular attention is paid to theoretical and practical possibilities and perspectives for development of small energy in Armenia, methodical approaches for assessing economic efficiency of small energy development alternatives are developed.

The main goal of this study is to develop conceptual principles for development and methodical approaches for assessing economic efficiency of small energy field in power supply and power servicing systems of Armenia.

To reach the targets of research the following issues were raised:

1. To consider the directions for small and medium enterprise development in RA, economic, financial and legislative principles, factors affecting this field and preventing its development.
2. To study the peculiarities of small and medium enterprise operation in the service provision field, assess its role and significance in economy development.

3. To disclose the background and possibilities of small energy development in Armenia.
4. To study the principles and problems of small energy development and legislative support mechanisms in RA.
5. To analyze the international practice of small energy formation, demonstrate the tendencies and innovative directions for the development of the field and the practicability of its application in RA.
6. To study methodological basis for assessing efficiency of development of small energy facilities.
7. To work up theoretical-methodological and practical principles for assessing efficiency of small energy facilities operation at different levels.


As a result of theoretical studies, analyses and scientific generalizations presented in the thesis the following conclusions and scientific ideas are reached:

1. The efficiency of small energy operation in energy saving and servicing fields is justified. The practical possibilities and perspectives for small energy development in the Republic of Armenia are disclosed.
2. The conceptual principles of small energy development are worked up. The foundational directions for development of the field in the Republic of Armenia are proved.
3. The theoretical methodological and practical principles of small energy efficiency are clarified. The assessment criteria for efficiency of small energy objects operation in different levels are overrepresented with adaptation of economic efficiency classic models.

As a result of comprehensive analysis of small energy facilities operation the main directions for introduction of their development approaches and principles are disclosed. These directions are aimed to increase of small energy facilities efficiency in the context of energy development in the Republic of Armenia.

The principles, conclusions and recommendations reached at making researches can be used in further theoretical and practical developments on assessing the economic efficiency of small energy field.

The results of the analysis, the main conclusions and recommendations presented in thesis are of practical importance and can be used in the process of development and implementation of RA Energy field development policies benefiting foundation, development and strengthening the mechanisms for increasing efficiency in small energy field.

A handwritten signature in black ink, consisting of several overlapping loops and strokes, located in the bottom right corner of the page.